

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/5

28 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց «Էկոնոմ» ՍՊԸ 08.04.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 05.03.2015 թ-ի թիվ 5101060 ակտի դեմ:

«Էկոնոմ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

2015 թ-ի փետրվարի 24-ին, ժամը 10:45-ի սահմաններում Վանաձորի ՏՀՏ հարկային տեսուչ Գրիգոր Մկրտումյանը մտել է ք.Վանաձոր, Աղայան 84ա հասցեում գտնվող «Էկոնոմ» ՍՊԸ-ի խանութ սրահ, 3 հատ 150 դրամանոց անձեռոցիկ է գնում, որի համար վճարում է 450 դրամ, սակայն խանութում գտնվող աշխատակիցը 450 դրամի փոխարեն շփոթմամբ տպում է 150 դրամ: Բողոքաբերը համոզված է, որ խախտումը կատարվել է շփոթմամբ, քանի որ արդեն բազմիցս նույն մարդիկ մտել են մանր գնումներ իրականացրել՝ խախտման փաստ արձանագրելու նպատակով, և խանութի աշխատակիցը այդ մասին զգուշացրել է:

Տեսուչն առանց կտրոնը վերցնելու դուրս է եկել խանութից, որից հետո չանցած 3 րոպե ներս է մտել մեկ այլ տեսուչ՝ Միեր անունով, որն էլ հանել է Z հաշվետվությունը, վերադարձրել գնված ապրանքը, հետ ստացել 450 դրամն ու դուրս եկել խանութից:

Հաջորդ օրը նույն Միերը այցելել է «Էկոնոմ» ՍՊԸ-ի Կ.Դեմիրճյան 32 հասցեում գտնվող խանութ, հարցրել է ընկերության տնօրենին և առաջարկել է նրան ստորագրել կազմած ակտը: Վերջինս հրաժարվել է ստորագրել ակտը և ստանալ ակտի իր օրինակը:

Երբ փոստի միջոցով ստացվել է հսկիչ գնումների վերաբերյալ արձանագրությունը բողոքաբերը հայտնաբերել է, որ Միերը ակտում նշված երեք տեսուչների ցանկում չկա:

Ակնկալելով հանձնաժողովի օբյեկտիվ մոտեցումն ընկերությունը խնդրում է չեղյալ համարել ստուգման ակտը, ինչպես նաև ակտում առաջադրված 300.000 դրամ հարկային պարտավորությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 04.02.2015 թ-ի թիվ 6206443 հանձնարարագրի «Էկոնոմ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 24.02.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6206443 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

հարկային տեսուչ Գրիգոր Մկրտումյանի կողմից 24.02.2015 թ-ին, ժամը 10:45-ի սահմաններում ք.Վանաձոր, Աղայան 84ա հասցեում գտնվող «Էկոնոմ» ՍՊԸ-ին պատկանող վաճառքի կետից կատարվել է հսկիչ գնում 450 դրամի չափով՝ 3 հատ անձեռոցիկ յուրաքանչյուրը 150 դրամ արժեքով, որի դիմաց վճարված կանխիկ գումարը վաճառող Սիրարփի Չատիկյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 10:51-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 150 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 450 դրամը, ժամը 10:53-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 10:53-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 450 դրամ ընդհանուր գումարով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման թիվ 2 հավելվածի 40-րդ կետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 26.02.2015 թ-ին հրապարակվել է թիվ 5101060 հանձնարարագիրը, որի համաձայն «Էկոնոմ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 05.03.2015 թ-ի թիվ 5101060 ակտը, որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված ապրանքների դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 10:51-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 10:53-ին կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Բացի այդ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները և ետ են ստացել հսկիչ գնման գումարը:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի պնդումներին, որ հսկիչ գնման ընթացքում հարկային տեսուչի կողմից գնված ապրանքների դիմաց վճարված 450 դրամի փոխարեն վաճառողուհու կողմից սխալմամբ մուտքագրվել է 150 դրամ, ապա հսկիչ գնումն իրականացրած հարկային տեսուչ Գ.Մկրտումյանը նշեց, որ բողոքաբերի հիշատակված պնդումները չեն համապատասխանում իրականությանը, այն է՝ վճարված 450 դրամ գումարն ընդհանրապես չի մուտքագրվել ՀԴՄ:

Բողոքաբերի հաջորդ պնդումների վերաբերյալ, որ հսկիչ գնմանը մասնակցել է Մհեր անունով տեսուչ, հսկիչ գնումն իրականացրած անձինք նշեցին, որ այդ պնդումները նույնպես չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, հսկիչ գնման ընթացքում բոլոր գործողությունները կատարվել են ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 04.02.2015 թ-ի թիվ 6206443 հանձնարարագրում նշված անձանց կողմից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 05.03.2015 թ-ի թիվ 5101060 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

